

Հայտարարություն
ՀՀ Սյունիքի մարզպետարանը հրապարակում է սույն հայտարարությունը փորձագետ ներգրավելու վերաբերյալ

ՀՀ Սյունիքի մարզպետարանը (այսուհետ՝ Մարզպետարան) ՀՀ քաղաքացիներին տեղեկացնում է գնումների գործընթացի իրականացման աշխատանքներում փորձագետ ներգրավելու մասին:

Աշխատանքների համառոտ նկարագիրը.

Գնումների պլանին համապատասխան գնումների գործընթացի իրականացում էլեկտրոնային համակարգով:

Փորձագետ ներգրավելու ժամկետը՝ Պայմանագիրը կնքվում է երեք ամիս ժամկետով:

Փորձագետի պարտականությունները՝ իրականացնում է մարզպետարանի կարիքների համար գնման ենթակա ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման գնման գործընթաց:

Փորձագետին ներկայացվող պահանջները՝

- ունի բարձրագույն կրթություն.
- գնումների համակարգողի որակավորում.
- Գնումների մասին ՀՀ օրենսդրության իմացություն.
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Վարձատրության չափը՝ Պայմանագրային:

Փորձագետի պաշտոնը չի կարող զբաղեցնել այն անձը, ով պաշտոնից ազատվել կամ տվյալ անձի ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիրառելու, օրենքով սահմանված փառձաշրջանը չանցնելու, օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու, Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք:

Դիմող ՀՀ քաղաքացիները Մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժին

(ք. Կապան, Նժդեհի 1) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը

- գրավոր դիմում՝ (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս)
- կրթությունը հավաստող պետական նմուշի և գնումների համակարգողի որակավորման փաստաթղթերի պատճենները,
- աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճեն՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք.
- մեկ գունավոր լուսանկար՝ 3x4 սմ չափսի.
- անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

ՀՀ քաղաքացիները փաստաթղթերը հանձնում են անձամբ (ք. Կապան, Նժդեհի 1, ՀՀ Սյունիքի մարզպետարան, անձնակազմի կառավարման բաժին):

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, ժամը 9:30-ից մինչև 12:30-ը բացի շաբաթ և կիրակի օրերից:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են զանգահարել ՀՀ Սյունիքի մարզպետարան (0285)44275 հեռախոսահամարով:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 01/02/2019թ.: